ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

24 սեպտեմբերի 2023թ. **N 63-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու ընտրություններն անցկացվել են 2023 թվականի սեպտեմբերի 17-ին՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 127-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք) 16-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Երևան քաղաքում կազմավորվել են 475 ընտրական տեղամասեր:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում կազմավորվել են թվով 475 տեղամասային ընտրական հանձնաժողովներ և նշանակվել տեղամասային ընտրական հանձնաժողովների 3.780 անդամներ: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի կանոնակարգումների համաձայն՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովների չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցրել են, և տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակել են թվով 4 նոր անդամներ: Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները թվով 2 տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի կազմից նշանակել են նախագահ և մեկ տեղամասային ընտրական հանձնաժողովում՝ քարտուղար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում, քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու նպատակով իրականացրել է մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, իրականացվել է 475 տեղամասային կենտրոնների մատչելիության գնահատում, որի արդյունքում 183 տեղամասային կենտրոններ հարմարացվել են տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողների համար: Մատչելի տեղամասային կենտրոնների ցանկը հրապարակվել է Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Բոլոր 475 տեղամասային հանձնաժողովներին հատկացվել են՝ բրայլյան ստվարաթղթե կաղապարներ, տեսողության խնդիրներ ունեցող անձանց՝ ինքնուրույն քվեարկությունն ապահովելու նպատակով:

Ընտրությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացրել են Երևան քաղաքում կազմավորված թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և դրանց օրինականության նկատմամբ վերահսկողություն է իրականացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների ժամանակ օգտագործվել է 1.362 տեխնիկական սարքավորում, տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընդհանուր թվով 1.362 քաղաքացիներ մասնագետի կարգավիճակով իրականացրել են ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների աշխատանքի կազմակերպումը: Թվով 475 ընտրական տեղամասերից՝ միայն մեկ տեղամասային ընտրական հանձնաժողովում է օգտագործվել մեկ տեխնիկական սարքավորում, իսկ 474 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 413-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, 61-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքն եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորումների միջոցով: Քվեարկության օրը բոլոր 475 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել երկու միջազգային կազմակերպություն՝ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (14 դիտորդ) և Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական հարթակը (10 դիտորդ), ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպություններից 3 համատեղ դիտորդական առաքելությունների ընդհանուր թվով 364 դիտորդ:

Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու նպատակով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվել են 40 տեղական զանգվածային լրատվության միջոցների 336 ներկայացուցիչ և 3 օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցների 5 ներկայացուցիչ:

Այցելուի կարգավիճակով տեղամասային ընտրական հանձնաժողովներ են այցելել և հետևել քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների 37 և այլ պետությունների ընտրական մարմինների 43 ներկայացուցիչներ:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններին մասնակցել են ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՂԹԱՆԱԿ, ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ, ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ, ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ, ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ կուսակցությունները և «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցությունների դաշինքը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 24-ին՝ հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմել է արձանագրություն՝ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն նշված արձանագրության՝

- ընտրողների ընդհանուր թիվը՝ 824317
- քվեարկության մասնակիցների թիվը՝ 234442
- տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը՝ 848000
- տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 47500
- ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների ընդհանուր թիվը՝ 234388
- ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը՝ 36

- ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը՝ 234424
- չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 47462
- չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը՝ 613712
- անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 2492
- անճշտությունների գումարային չափը՝ 188

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը
ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**22,447**
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**75,494**
ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**2,600**
ՀԱՂԹԱՆԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**3,960**
ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**1,708**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**2,569**
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**43,797**
ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**781**
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**26,233**
ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**1,277**
ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**4,178**
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**2,345**
ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**8,429**
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	**35,807**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարին՝ իրազեկելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի միջև հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակների բաշխման արդյունքների մասին: Նույն գրությամբ Երևանի քաղաքապետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարն իրազեկվել են խախտմամբ փակցված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանելու համայնքի ղեկավարի լիազորության մասին: Խախտմամբ փակցված քարոզչական պաստառների, քարոզչական այլ նյութերի առկայության մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացված տեղեկությունների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այլ գրությամբ իրազեկել է Երևանի քաղաքապետին: Երևանի քաղաքապետի 18.09.2023թ. N 01/170634-23 գրությամբ պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառների, քարոզչական այլ նյութերի հայտնաբերվելու դեպքում դրանք ապամոնտաժվել են:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ընտրությունների կազմակերպման և ընտրական գործընթացների վերաբերյալ ստացվել է ընդհանուր թվով 14 դիմում, որոնցից 8-ը ներկայացվել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների կողմից: Մասնավորապես,

- ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ կուսակցությունը ներկայացրել է դիմում՝ նախընտրական քարոզչության հավասար պայմաններ ապահովելու հարցում հետամուտ լինելու խնդրանքով: Դիմումն ուղարկվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով,
- ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ կուսակցությունը ներկայացրել է 3 դիմում: Նախընտրական քարոզչության սահմանված կարգի ենթադրյալ խախտումների վերաբերյալ մեկ դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն, երկրորդ դիմումով նախընտրական քարոզչության սահմանված կարգի ենթադրյալ խախտումների վերաբերյալ հանգամանքների ստուգման նպատակով կատարվել են ուսումնասիրություններ, ստացվել են բացատրություններ, որոնց արդյունքում խախտումներ չեն արձանագրվել, և, երրորդ դիմումով կուսակցությունը պահանջել

է հիմնավորում՝ ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վերաբերյալ, որին գրությամբ տրվել է պատասխան,

- ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցությունը և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն ներկայացրել են մեկ դիմում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց քվեարկելու ընթացակարգերի վերաբերյալ պարզաբանման պահանջով (գրությամբ տրվել է պատասխան), և ևս 3 դիմում՝ կալանքի տակ գտնվող թեկնածուի՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելու հավասար պայմաններ ապահովելու խնդրանքով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես օպերատիվ լուծում պահանջող հարց, ձեռնարկել է միջոցներ և ապահովել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 9–րդ մասի պահանջների կատարումը: Իսկ հեռուստաբանավեճերին թեկնածուի մասնակցությունն ապահովելու մասով դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն:

Թվով 6 դիմում ներկայացվել է համատեղ դիտորդական առաքելության կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների կողմից, որոնցից՝

- 1 դիմումով ներկայացվել են սահմանված վայրերում փակցված քարոզչական պաստառները պոկելու, պատռելու, դրանց վրա գրառումներ կատարելու վերաբերյալ հանգամանքներ, դիմումն ուղարկվել է ՀՀ ներքին գործերի նախարարություն,
- 1 դիմումով ներկայացվել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտումների վերաբերյալ հանգամանքներ, դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն,
- 2 դիմումով ներկայացվել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտումների վերաբերյալ հանգամանքներ, որոնց ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը խախտում չի հայտնաբերել,
- 2 դիմումով ներկայացվել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի հնարավոր խախտումների վերաբերյալ հանգամանքներ, որոնց ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզել է, որ դիմումներում նշված հանգամանքները վերաբերվում են թվով 5 կուսակցությունների և կուսակցությունների մեկ դաշինքի տպագիր քարոզչական նյութերին: Թվով երեք կուսակցություններին առնչվող հանգամանքներում նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չի եղել: Երեք դեպքում նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտմամբ տպագրված քարոզչական նյութերի առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում

պարզվել է, որ մինչ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված հանգամանքները պարզելուն ուղղված միջոցներ ձեռնարկելը նշված խախտումներն արդեն իսկ վերացված են եղել, ինչի վերաբերյալ կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը ներկայացրել են բացատրագրեր:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին որևէ գրավոր դիմում չի ներկայացվել: Սակայն հեռախոսազանգերով, զանգվածային լրատվության միջոցներով և տարբեր էլեկտրոնային կայքերով ներկայացված առանձին դեպքերի վերաբերյալ տեղեկությունները դիտարկվել են որպես օպերատիվ լուծում պահանջող հարցեր, և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ձեռնարկել են անհրաժեշտ միջոցներ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծության կենտրոն, որտեղ գործել է նաև թեժ գիծ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած դեպքերի վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել են մեկ տասնյակից ավելի կայքերում տեղ գտած մոտ երեք տասնյակ հաղորդումներին, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանությունների ու պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը հենց քվեարկության օրը զետեղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել է մի շարք ինստիտուտներ, որոնց նպատակն է իրականացնել ընտրական գործընթացի բոլոր

մասնակիցների իրավունքների պաշտպանություն: Ցանկացած իրավախախտում փաստելու, արձանագրելու, բողոքարկելու բոլոր հնարավորություններն ամրագրված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում: Ամրագրված են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք ապահովում են աննախադեպ և լիակատար թափանցիկություն ընտրական գործընթացների նկատմամբ՝

ա) ընտրողների ռեգիստրը որոնման հնարավորությամբ մշտապես հրապարակված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում որոնման հնարավորությամբ հրապարակվել է նաև Երևանի ընտրողների ռեգիստրը,

բ) ընտրողների ցուցակները ներբեռնման հնարավորությամբ հրապարակվել են համացանցում՝ www.police.am հասցեով,

գ) քվեարկության ամբողջ ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը տեսանկարահանվել և հեռարձակվել է համացանցով՝ ուղիղ ժամանակային ռեժիմում,

դ) տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան կարող են իրականացնել տեսանկարահանում և ձայնագրում,

ե) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ուղիղ ժամանակային ռեժիմում հեռարձակվում և տեսաձայնագրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը,

զ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ուղիղ ժամանակային ռեժիմում հեռարձակվել և տեսաձայնագրվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների վերահաշվարկների աշխատանքները,

է) ընտրական տեղամասերում ընտրողների գրացումն իրականացվում է տեխնիկական սարքավորումների կիրառմամբ, որոնք բացառում են կրկնակի քվեարկության ցանկացած հնարավորություն,

ը) քվեարկությունից անմիջապես հետո տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց տրամադրվում է տեխնիկական սարքավորումների միջոցով տպված տեղեկանք՝ ընտրողների մասնակցության մասին,

թ) քվեարկությունից հետո տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց տրամադրվում է քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք,

ժ) համացանցում հրապարկվում է քվեարկության արդյունքներն՝ ըստ ընտրական տեղամասերի,

ժա) քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքները սկանավորվել և հրապարակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում,

ժբ) քվեարկությունից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ներբեռնման հնարավորությամբ հրապարակվել են ընտրողների ստորագրած ցուցակները:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանում է վերոհիշյալ բոլոր ինստիտուտների միաժամանակյա գործողությունն՝ ապահովելով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար լիակատար վերահսկողության և, ըստ անհրաժեշտության, խախտված իրավունքների պաշտպանության իրականացում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու ինստիտուտը: Համաձայն նշված իրավադրույթի.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Եթե դիմումի քննարկման արդյունքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:»:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում ներկայացնելու իրավունք վերապահվում է թե՛ ընտրություններին մասնակցող կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), և թե՛ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններին մասնակցող 13 կուսակցություններից և կուսակցությունների 1 դաշինքից, ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 802 թեկնածուներից, ընդհանուր թվով 3.485 վստահված անձանցից, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրությունում հատուկ կարծիք ներկայացնելու իրավունք ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովների 3.780 անդամներից, և որևէ մեկը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված ժամկետներում չի ներկայացրել դիմում՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ «Քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 11:00-ին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով իրականացված վիճակահանությամբ պատահականության սկզբունքով ընտրում է իրենց սպասարկման տարածքում գտնվող երեք ընտրական տեղամաս, որտեղ գրանցված քվեարկության արդյունքները պետք է վերահաշվարկվեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում 10-ից պակաս ընտրական տեղամասերի առկայության դեպքում պատահականության սկզբունքով վերահաշվարկ իրականացվում է միայն մեկ ընտրական տեղամասում: Վերահաշվարկի դիմումով և վիճակահանության արդյունքով ընտրված ընտրական տեղամասերի համընկնման դեպքում լրացուցիչ վիճակահանություն չի իրականացվում: Վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի վերաբերյալ գրանցամատյանում կատարվում է գրառում:»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն առաջին հերթին վերահաշվարկում է վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, երկրորդ հերթին՝ բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովի կարծիքով ներկայացված են քվեարկության արդյունքների սխալ ամփոփման հիմնավոր ապացույցներ, ինչպես նաև վերահաշվարկում են բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց արձանագրությունների ուսումնասիրմամբ (այդ թվում՝ անճշտությունների ուսումնասիրմամբ) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ծագել են արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ կասկածներ, կամ այդ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է գրառում Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկանքը տպելու անհնարինության մասին: Երրորդ հերթին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկում է բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում: Յուրաքանչյուր հերթի համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է, թե ինչ հերթականությամբ է վերահաշվարկելու ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Բոլոր 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները 2023 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին հրավիրված նիստերում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով իրականացված վիճակահանությամբ ընտրել են իրենց սպասարկման տարածքում գտնվող երեքական ընտրական տեղամաս: Բոլոր 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները վերահաշվարկել են վիճակահանությամբ ընտրված բոլոր 30 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, սեփական նախաձեռնությամբ վերահաշվարկել են 47 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային

ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:»:

Երևան քաղաքում կազմավորված 475 ընտրական տեղամասերում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ներկայացվել է 1 դիմում՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ վստահված անձի կողմից՝ թիվ 8/01 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջով: Վերահաշվարկի դիմումի հիման վրա իրականացվել է 8/01 տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվել է ընդհանուր թվով 78 ընտրական տեղամասերի քվեարկության արդյուքների վերահաշվարկ, որի արդյունքում տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից արձանագրված կողմ քվեարկած քվեարթերթիկների և անվավեր քվեաթերթիկների թվերը փոփոխվել են հետևյալ համամասնությամբ՝

ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվն ավելացել է 16-ով,

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ կուսակցությանը՝ ավելացել է 31-ով,

ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ կուսակցությանը՝ ավելացել է 5-ով,

ՀԱՂԹԱՆԱԿ կուսակցությանը՝ ավելացել է 1-ով,

ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ կուսակցությանը՝ ավելացել է 6-ով,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ կուսակցությանը՝ պակասել է 2-ով,

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ կուսակցությանը՝ ավելացել է 32-ով,

ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ կուսակցությանը՝ ավելացել է 1-ով,

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ կուսակցությանը՝ պակասել է 3-ով,

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ կուսակցությանը՝ պակասել է 5 քվեաթերթիկ,

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ կուսակցությանը՝ ավելացել է 4-ով,

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ կուսակցությանը՝ պակասել է 3-ով,

ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ կուսակցությանը՝ ավելացել է 4-ով,

«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցությունների դաշինքինը՝ ավելացել է 67-ով,

Անվավեր քվեաթերթիկների թիվը պակասել է 266-ով,

Վերահաշվարկի արդյունքում անճշտությունների չափը նվազել է 10-ով:

Ընտրական իրավունքների պաշտպանության առումով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ընդունված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 52-Ա որոշման համաձայն՝ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները սկանավորվել և ըստ ընտրական տեղամասերի որոնման հնարավորությամբ տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում սահմանված ժամանակահատվածում ընտրական հանձնաժողովներում չի ստացվել որևէ դիմում՝ այլ անձի փոխարեն քվեարկություն կատարելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմումը գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով պետք է ներկայացվի ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դիմում տալու համար ընտրական օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով, իսկ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:

Քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է 2 դիմում, որոնցից 1-ը ներկայացվել է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ կուսակցության կողմից՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման հիմքով դատարան դիմելու և ընտրություններին մասնակցող կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով, որը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով գրությամբ վերադարձվել է: Քվեարկության օրը ստացված

մյուս դիմումով ներկայացվել են դիտորդի իրավունքների իրականացմանը խոչընդոտելուն առնչվող հանգամանքներ, որի կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեռնարկել է օպերատիվ միջոցներ դիտորդի իրավունքների հնարավոր խոչընդոտները վերացնելու ուղղությամբ և լուծել է առաջացած խնդիրները: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ներկայացված հանգամանքներում, հնարավոր է, առկա են քրեաիրավական բնույթի հատկանիշներ, նշված դիմումն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Քվեարկության օրը թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից միայն մեկ՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստացվել է մեկ «հարցում-դիմում-բողոք-առաջարկ» ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցության վստահված անձի կողմից, որին տրվել է գրավոր պատասխան:

Քվեարկության օրվանից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստացել է թվով 8 դիմում, որոնցից՝

- 3-ը՝ հարցում և հարցադրումներ պարունակող դիմումներ են, որոնց գրությամբ տրվել են պատասխաններ,
- 1 դիմում ներկայացվել է համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունից՝ դիտորդի լիազորությունները դադարեցնելու պահանջով, որին գրությամբ տրվել է պատասխան,
- 1 դիմում ներկայացվել է «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցությունների դաշինքի կողմից՝ տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեջ սխալ տվյալի մուտքագրման վերաբերյալ՝ սխալը շտկելու պահանջով: Դիմումի պահանջը բավարարվել է և սխալն ուղղվել է:
- 1 դիմում գրառվել է ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցության վստահված անձի կողմից՝ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, որում նկարագրված է թիվ 6/32 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից թույլ տված ընթացակարգային խախտում: Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկել է 6/32 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները և արձանագրությամբ վավերացրել, նաև դիմումատուին տրվել է գրավոր պատասխան:
- 1 դիմում ներկայացվել է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ կուսակցության կողմից՝ նույն կուսակցության դիմումը վերադարձնելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գրությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին բողոքարկելու, ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման հիմքով դատարան դիմելու և ընտրություններին մասնակցող կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու

պահանջներով: Ներկայացված դիմումը քննարկվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 23.09.2023թ. նիստում և կայացվել թիվ 62-Ա որոշումը:

- 1 դիմում ներկայացվել է հասարակական կազմակերպությունից՝ քվեարկության օրը ժամը 20:00-ից հետո ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացված դիտարկումների վերաբերյալ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 23.09.2023թ. նիստում հասարակական կազմակերպության դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժվել է, և նույն նիստում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի կանոնակարգումների համաձայն՝ սեփական նախաձեռնությամբ իրականացրել է վարչական վարույթ և կայացրել թիվ 61-Ա որոշումը:

Քվեարկության օրվանից հետո թվով 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից միայն թիվ 6, 8 և 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է ընդհանուր թվով 3 դիմում, որոնցից՝ 2-ը ներկայացվել են համատեղ դիտորդական առաքելություն իրականացրած հասարակական կազմակերպության կողմից, որոնցում արտացոլված հանգամանքները արձանագրված են եղել նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում, և դրանցով իրականացվել են վարչական վարույթներ: Գրանցամատյաններում առկա գրառումների ուսումնասիրությամբ հարուցված վարչական վարույթների արդյունքում ընդունված որոշումներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները գնահատել են դրանց ազդեցությունը տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Քվեարկության օրվանից հետո մյուս դիմումը ներկայացվել է ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցության վստահված անձի կողմից՝ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից կարող է ներկայացվել քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դիմում տալու համար ընտրական օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով, իսկ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը: ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ կուսակցության վստահված անձի կողմից տեղամասում քվեարկության արդյունքներն

անվավեր ճանաչելու պահանջով ներկայացված դիմումը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով՝ գրությամբ վերադարձվել է:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:»:

Թվով 475 տեղամասերից միայն 148 (կամ ընդհանուր տեղամասերի թվի 31%-ում) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել թվով 281 գրառումներ, իսկ 327 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ:

Թվով 475 տեղամասերից որևէ տեղամասի քվեարկության արդյունքների արձանագրություններում առկա չէ նշում հատուկ կարծիք ունենալու մասին:

2023 թվականի սեպտեմբերի 22-ին բոլոր 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ՝ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ, որոնցով ամրագրվել է, որ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց կողմից ընդունված որոշումներով միջնորդել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել այն տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների, քարտուղարների կամ անդամների՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները, ովքեր թույլ են տվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների առանձին ընթացակարգային խախտումներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրական հանձնաժողովների առանձին անդամների կողմից թույլ տրված Ընտրական օրենսգրքի պահանջների առանձին ընթացակարգային խախտումները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն. «Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում:»:

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ ԴՎԱ-5-Ե-44596/23 գրության համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրությունների վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 23-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ անավարտ գործեր առկա չեն:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 91-Ա որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրական օրենսգրքի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և

ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախաձեռնությամբ 2023 թվականի սեպտեմբերի 4-ին վարչական վարույթ է հարուցվել «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության («ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» տեսալսողական ծրագիր) նկատմամբ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտման հատկանիշներով, 2023 թվականի սեպտեմբերի 18-ին հարուցվել է ևս մեկ վարույթ՝ «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության («ՆՈՒՌ» տեսալսողական ծրագիր) նկատմամբ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հատկանիշներով:

2023 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 91-Ա որոշմամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, որպես ամփոփում արձանագրել է. «Մշտադիտարկման ցուցանիշներից ակնառու է, որ առկա է առանձին տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքին հատկացված եթերաժամի որոշակի անհամաչափություն: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակական բաշխման տարբերություններով, ինչպես նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի կողմից անվճար և վճարովի եթերաժամի օգտագործման, տեսալսողական ծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամությամբ:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից 2023 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում տրամադրած և՛ կուսակցությունների, և՛ կուսակցությունների դաշինքի կողմից օգտագործված եթերաժամի արձանագրված անհամաչափությունը որպես տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի համար հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատում:(…)»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության 23.09.2023թ. եզրակացությունը՝ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական

ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի և կից փաստաթղթերի ստուգման արդյունքների մասին:

Համադրելով բանկերից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը փաստել է, որ բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**